
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Ստեղծարար Եվրոպա



Իրականացման ժամանակահատված: 01.01.2021 - 31.12.2027

ԱլԳ երկրներ:

Հայաստան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 2 440 000 000

Ընդհանուր բյուջե: € 2 440 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

EACEA (European Education and Culture Executive Agency)

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: Facebook: @CreativeEuropeEU, Twitter: @europe_creative, Instagram: @creative.eu, Facebook page of the Creative Europe Desk Ukraine: @creativeeurope.in.ua, Instagram of the Creative Europe Desk Ukraine: @ced.ukraine, YouTube: Creative Europe Desk Ukraine

Նախագծի կայքէջ: ec.europa.eu/culture/creative-europe

Նախագծի նկարագրություն:

«Ստեղծարար Եվրոպա»-ն աջակցում է մշակութային և ստեղծարար ոլորտներին: 2021–2027 թվականներին ծրագիրը ներդրումներ կկատարի այնպիսի նախաձեռնություններում, որոնք ամրապնդում են մշակութային բազմազանությունը և արձագանքում մշակութային ու ստեղծարար ոլորտների կարիքներին և մարտահրավերներին:
Ծրագիրը կնպաստի այդ ոլորտների վերականգնմանը՝ խթանելով դրանց թվայնացումը, էկոլոգիական կայունությունը, դիմակայունությունն ու ներառականությունը: «Ստեղծարար Եվրոպա»-ն նաև առաջ է մղում այն նախաձեռնություններն ու լավագույն փորձը, որոնք նպաստում են Եվրոպական հանձնաժողովի առանցքային առաջնահերթությունների իրականացմանը, այդ թվում՝ Կանաչ համաձայնագրին, ներառականությանը և գենդերային հավասարակշռությանը:

Ծրագիրը բաղկացած է երեք ուղղությունից.
ՄՇԱԿՈՒՅԹ՝ ընդգրկում է մշակութային և ստեղծարար բոլոր ոլորտները, բացառությամբ տեսալսողական և կինոյի ոլորտների,
ՄԵԴԻԱ՝ ընդգրկում է տեսալսողական և կինոյի ոլորտները,
ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ՝ խթանում է համագործակցությունը ստեղծարար ոլորտների միջև և ընդգրկում է նաև լրատվամիջոցների ոլորտը:

Ակնկալվող արդյունքներ:

1. ՄՇԱԿՈՒՅԹ
Ավելի ընդգծված աջակցություն եվրոպական միջսահմանային ստեղծագործությանը, ստեղծագործությունների տարածմանը և մշակութային ու ստեղծարար ոլորտներում նորարարությանը: «Ստեղծարար Եվրոպա» ծրագրի ֆինանսավորմանը ավելի մատչելի հասանելիություն՝ համաֆինանսավորման բարձրացված դրույքաչափերի շնորհիվ: Արվեստագետների և մշակութային մասնագետների համար հատուկ մշակված շարժունակության սխեմա: Թիրախային գործողություններ՝ երաժշտության, գրականության, ճարտարապետության, մշակութային ժառանգության, դիզայնի, նորաձևության և մշակութային զբոսաշրջության ոլորտների հատուկ կարիքներին արձագանքելու նպատակով:
2. ՄԵԴԻԱ
Խրախուսում է համագործակցությունը թե՛ արժեքային շղթայի տարբեր օղակների միջև, թե՛ ԵՄ մակարդակում՝ նպաստելով տեսալսողական ընկերությունների զարգացմանն ու եվրոպական բովանդակության միջազգային տարածմանը: Աջակցում է տաղանդների բացահայտմանը և զարգացմանը՝ անկախ նրանց ծագումից, ինչպես նաև խթանում է երկրների միջև լայն մասնակցությունն ու գործընկերությունը: Նպաստում է նոր տեխնոլոգիաների կիրառմանը՝ թվային վերափոխման հնարավորությունները լիարժեք օգտագործելու համար: Խրախուսում է ոլորտի էկոլոգիական պատասխանատվությունը և ներառում է հասարակական կարևոր նպատակներ, այդ թվում՝ գենդերային հավասարակշռությունն ու բազմազանությունը: